

բարոյագիտութիւնը այս հարցադրման յարմար պատասխաններ կը փնտռէ, բարոյական կանոններ կը սահմանէ՝ թէ՛ անհատներու պարագային եւ թէ՛ ընկերային-հասարակական շրջանակներու համար:

Ակնյայտ է, որ բարոյական ըմբռնումները եւ տեսակէտները կը տարբերին մէկ ժամանակաշրջանէն միւսը կամ մէկ մշակոյթէն միւսը: Այսուհանդերձ, կան դիմացկուն տարրեր, որոնք ժամանակի ընթացքին կրցած են անխախտ մնալ եւ շարունակական բնոյթ ստանալ: Կան նաեւ ընդհանրական տարրեր, որոնք ի զօրու մնացած են զանազան մշակոյթներու մէջ: Ուրեմն բարոյագիտութեան գլխաւոր պարտականութիւնն է կատարել նմանօրինակ բարոյական տարրերու կամ ընդհանրութիւններու սահմանումը եւ անոնց հիմնաւորումը, միշտ նկատի ունենալով *բարի* ու *ճիշդ* բարոյականութիւն մը:

Իրականութեան մէջ *կանոնական* որակումը այստեղ աւելորդ է, քանի որ *բարոյագիտութիւն* եզրի բնորոշումին մէջ արդէն կը գտնենք կանոններու գոյութիւնը եւ անոնց վերլուծումը: [Ասիկա կը նմանի, օրինակ, երբ ըսեմ «չամուսնացած ամուրի»։ *ամուրի* եզրին մէջ արդէն առկայ է չամուսնացած ըլլալու գաղափարը եւ աւելորդ է *չամուսնացած* վերադիրը:] Ուստի, այսուհետեւ, այս մակարդակին համար, ընդհանրապէս, պիտի օգտագործուի լոկ *բարոյագիտութիւն* եզրը:

2.- Նկարագրական բարոյագիտութիւն

Նկարագրական բարոյագիտութիւնը (Descriptive Ethics) փորձառական (Empirical) բնոյթ կը կրէ եւ երբեք կանոններ չի դնէր: Ան երբեք չի հարցներ՝ «*ի՞նչ է բարոյական ճիշդ վարմունքը*» եւ այս հարցադրման յարմար պատասխաններ չի փնտռէր, այլ պարզապէս բարոյականութեան երեւոյթները կը նկարագրէ:

Պարզաբանելու համար այս բնորոշումը, կու տանք երկու օրինակ.-

- Երբ պատմաբան մը կը գրէ կամ կը խօսի հին հայկական թագաւորութիւններու բարոյական երեւոյթներուն (սովորութիւններուն ու աւանդութիւններուն) մասին, ինք (պատմաբանը) երբեք կանոններ չի դնէր, այլ միայն կը նկարագրէ, ինչ որ անցեալին կար:

- Երբ ըսուի, որ անձնասպանութիւնը քրիստոնէական հասկացողութեամբ մահացու մեղք է. ասիկա թեւ բազմաթիւ քրիստոնեայ հաւատացեալներու կողմէ ընդունուած փորձառական երեւոյթի մը նկարագրութիւնն է՝ որպէս եզրակացութիւն, սակայն, երբեք կանոն մը չէ:

Անշուշտ որ, բարոյագիտութեան մարզին մէջ, երբեմն կարելի է նմանօրինակ նկարագրական - փորձառական արտայայտութիւններու հանդիպիլ, սակայն անոնք, կանոններ չըլլալով, չեն պատկանիր փիլիսոփայական բարոյագիտութեան ճիւղին, այլ մաս կը կազմեն, օրինակ՝ պատմաբանութեան, ազգաբանութեան, հոգեբանութեան կամ ընկերաբանութեան: